ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԵՏ.ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ 13

ՀՐԱՄԱՆ

«10» «03» 2022թ. Թիվ 50/0

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, առաջնորդվելով Հյուսիսային համալսարանի կանոնադրությամբ.

Հրամայում եմ

1. Հաստատել «Հյուսիսային համալսարանում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կարգը» համաձայն հավելվածի:
2. Հյուսիսային համալսարանի ընդունող հանձնաժողովի նախագահին՝ ապահովել Հյուսիսային համալսարանում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության գործընթացի համապատասխանությունը սույն կարգի պահանջներին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում է 2022-23 ուստարվանից հետո բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպման գործընթացի վրա:
4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հյուսիսային համալսարանի ռեկտորի 16.02.2015թ «Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցման ընդունելության կարգը» հաստատելու մասին թիվ 29/1 հրամանը
5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահում եմ պրոռեկտոր Ռ.Ջանինյանին:

ՌԵԿՏՈՐ Մ.ՄԱԿԻՉՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 01515952 "СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ" "NORTHERN UNIVERSITY" ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ LIMITED LIABILITY COMPANY

ԿԱՐԳ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգը կանոնակարգում է Հյուսիսային համալսարանում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ դիմորդների ընդունելության գործընթացը;
2. Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր տարվա համար բուհի կողմից հրապարակված տեղերի քանակին և պայմաններին համապատասխան, համալսարանին տրված կրթական գործունեության լիցենզիայի տեղերի շրջանակում:
3. Հյուսիսային համալսարանում հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունեն բարձրագույն, միջնակարգ, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց տարիքային սահմանափակման:
4. Հեռակա ուսուցման ընդունելությունն իրականացվում է տվյալ մասնագիտության բովանդակությանը համապատասխան, ՀՀ օրենսդրությամբ սահմանված քննական առարկաներից՝ քննությունների արդյունքների հիման վրա:
5. Տվյալ ուստարվա համար ընդունելությունը, այդ թվում, ընդունելության յուրաքանչյուր փուլին համապատասխան ընդունելության քննությունները կազմակերպվում են ՀՀ կառավարության կողմից ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (հեռակա) ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի հրապարակումից ոչ շուտ, քան երկու ամիս հետո՝ մինչև տվյալ ուսումնական տարվա հոկտեմբերի 20–ը, որը դիմորդների և կամ ընդունվողների քանակով պայմանավորված կարող է հետաձգվել, բայց ոչ ավել, քան ուսումնական պլանով նախատեսված՝ դասընթացների մեկնարկին նախորդող երկշաբաթյա ժամկետը:
6. Ըստ մասնագիտությունների հեռակա ուսուցման տվյալ ուսումնականա տարվա յուրաքանչյուր փուլի ընդունելության հայտարարությունը, այդ թվում, վարձավճարի չափը, ընդունելությանը և մրցույթին ներկայացվող լրացուցիչ նախապայմանները նախապես, ոչ ուշ քան ընդունելության մեկնարկից մեկ ամիս առաջ հրապարակվում

են Հյուսիսային համալսարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ինչպես նաև տեղեկատվության տարածման համապատասխան այլ միջոցներով:

7. Ընդունելության համար դիմորդները ոչ ուշ, քան տվյալ փուլի համար հայտարարված ընդունելության քննության մեկնարկից մեկ շաբաթ առաջ ընդունող հանձնաժողովի քարտուղարություն են ներկայացնում դիմում հայտ, կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

7.1. անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, կամ ծննդյան վկայական, կամ փախստականի վկայական, կամ ՀՀ հատուկ անձնագիր, կամ ՀՀ կացության վկայական) բնօրինակը և պատճենը (բնօրինակը պատճենի հետ համեմատվելուց հետո վերադարձվում է),

7.2. միջնակարգ կրթության ատեստատը [1], կամ նախնական, կամ միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին փաստաթուղթը՝ դիպլոմը իր հավելվածով (բնօրինակը),

7.3. կենտրոնացված և միասնական կարգով հանձնած քննական առարկայի/ների գնահատականի/ների հիմքերը՝ առկայության դեպքում (բնօրինակը),

7.4. 6 լուսանկար (3 X 4 սմ չափի),

7.5. սոցիալական քարտի բնօրինակը և պատճենը՝ առկայության դեպքում (բնօրինակը պատճենի հետ համեմատվելուց հետո վերադարձվում է),

7.6. զինվորական գրքույկի և կամ ժամկետային զինվորական ծառայություն անցնելու մասին զինվորական կոմիսարիատից տեղեկանքի բնօրինակը և պատճենը՝ առկայության դեպքում (բնօրինակը պատճենի հետ համեմատվելուց հետո վերադարձվում է),

7.7. միջազգային և հանրապետական մրցույթների, օլիմպիադաների, դիպլոմ(ներ)ի բնօրինակ(ներ)ը և պատճեն(ներ)ը՝ առկայության դեպքում (բնօրինակը պատճենի հետ համեմատվելուց հետո վերադարձվում է) ,

7.8. քաղվածք աշխատանքային գրքույկից՝ առկայության դեպքում,

7.9. ընդունելության փաստաթղթերի ընդունման համար սահմանված՝ Հյուսիսային համալսարանի դրամարկղ կամ բանկային հաշվին 3000 (երեք հազար) դրամ գումարի վճարումը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև Հյուսիսային համալսարանում կազմակերպվող յուրաքանչյուր քննության մասնակցության համար՝ 2000 (երկու հազար) դրամ գումարի վճարումը հաստատող փաստաթուղթ: Անկախ

---

[1] Հանրակրթական ավարտական դասարանի աշակերտները ատեստատ ներկայացնում են ստանալուց հետո

քննության արդյունքներից, սույն կետով նախատեսված գումարը վերադարձման ենթակա չէ: Հանրակրթական ավարտական դասարանի աշակերտների համար բուհի նպատակային ծրագրերի շրջանակներում ընդունելության քննությունները կազմակերպվում են անվճար:

8. Համալսարան ընդունելության համար քննական առարկաների գնահատականներ են համարվում նախորդ երեք տարիների ընթացքում դիմորդի հանձնած՝ միասնական կամ կենտրոնացված քննությունների գնահատականները, նախորդ երեք տարիների ընթացքում Հյուսիսային համալսարանում կազմակերպված ընդունելության քննությունների գնահատականները, առանց վաղեմության ժամկետի՝ միջնակարգ կրթության ատեստատի[1] կամ նախնական մասնագիտական[2] (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

8.1. 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝ «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորին, «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորին, գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորին:

8.2. միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան, քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝ «3»-ը համարժեք է 13 միավորին, «4»-ը համարժեք է 17 միավորին, «5»-ը համարժեք է 20 միավորին:

9. Դիմորդի՝ միասնական կամ կենտրոնացված քննությունների գնահատականներ, միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի, տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականներ, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատական չլինելու, և կամ դիմորդի ցանկության դեպքում կազմակերպվում են քննական առարկաների գծով

---

[1] Հիմք է ընդունվում միայն ոչ մրցութային քննական առարկաների համար

[2] Հիմք է ընդունվում միայն ոչ մրցութային քննական առարկաների համար

քննություններ՝ Համալսարանի ռեկտորի կողմից հաստատված առարկայական հանձնաժողովների կողմից՝ համապատասխան առարկայական ծրագրերով և գիտելիքների գնահատման չափանիշներով: Տվյալ ուսումնական տարվա ընդունելության համար միևնույն առարկայից դիմորդը Հյուսիսային համալսարանում հնարավորություն ունի քննություն հանձնել առավելագույնը երեք անգամ: Հանրակրթական ավարտական դասարանի աշակերտների համար բուհի նպատակային ծրագրերի շրջանակներում նույնպես կարող են կազմակերպվել ընդունելության քննություններ:

10. Համալսարանի ընդունող հանձնաժողովի նախագահը ընդունելության յուրաքանչյուր փուլի համար հաստատում է քննատախտակը: Դիմորդներին առնվազն մեկ շաբաթ առաջ տրամադրվում են քննաթերթիկներ, որտեղ նշվում է քննության օրը և ժամը: Քննատախտակով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննության չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննությանը: Հարգելի պատճառով (փաստաթղթով հաստատված) քննության չներկայացած դիմորդին ընդունող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե քննատախտակով տվյալ առարկայի քննությունները չեն ավարտվել:

11. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Ութից բարձր միավորները գնահատվում են տասնորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

12. Դիմորդները կարող են պահպանել միասնական և տվյալ տարվա կենտրոնացված համակարգով հանձնած քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաև կենտրոնացված և միասնական կարգով հանձնած քննական առարկայի/ների գնահատականը/ները, տվյալ առարկայից/ներից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

13. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու առարկայական քննական հանձնաժողովի նախագահին առանց քննասենյակից դուրս գալու, իսկ գրավոր քննության գնահատականը՝ այն հայտնելու պահից 24 ժամվա

ընթացքում: Գրավոր քննության գնահատականները հայտարարվում են ոչ ուշ, քան քննությանը հաջորդող 3–րդ օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16:00:

14. Քննությունների ընթացքում ծագած վեճերը լուծում է բուհի ընդունող հանձնաժողովը:

15. Ընդունելությանը մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ: Ընդունելությունը կատարվում է փուլերով՝ յուրաքանչյուր փուլի համար բուհի կողմից հատկացված տեղերի շրջանակներում, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել տվյալ մասնագիտության համար սահմանված լիցենզիոն տեղերի քանակը: Ընդունելության տվյալ փուլի արդյունքում չհամալրված տեղերը բաշխվում են հաջորդ փուլերի տեղերի մեջ:

16. Դիմորդների քանակը ընդունելության տվյալ փուլում մասնագիտության համար բուհի սահմանած տեղերի քանակ գերազանցելու դեպքում կազմակերպվում է մրցույթ, որի արդյունքները հաստատում է Համալսարանի ռեկտորը: Մրցույթում ներքոշարադրյալ առաջնայնությամբ հաղթող են ճանաչվում՝ առավել բարձր գնահատական ունեցող և տվյալ մասնագիտության տարեկան ուսման վարձի 25 տոկոս կանխավճար կատարած դիմորդները, առավել բարձր գնահատական ունեցող դիմորդները, տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդները, մեդալակիր դիմորդները, դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաներում առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդները, տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդները, առավել վաղ դիմած դիմորդները: Տվյալ փուլի մրցույթից դուրս մնացած դիմորդները ընդհանուր հիմունքներով կարող են մասնակցել հաջորդ փուլերի մրցույթներին:

17. Սույն կարգով ընդունված ուսանողների հրամանագրումը կատարվում է մինչև հոկտեմբերի 25-ը, որը, սույն կարգի 5–րդ կետում նախատեսված դեպքում՝ դիմորդների և կամ ընդունվողների քանակով պայմանավորված կարող է հետաձգվել, բայց ոչ ավել, քան ուսումնական պլանով նախատեսված՝ դասընթացների մեկնարկին նախորդող մեկշաբաթյա ժամկետը:

ՌԵԿՏՈՐ Մ.ՄԱԿԻՉՅԱՆ